



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
ՈՐՈՇՈՒՄ**

15 ապրիլ 2011 թ.

թիվ 21-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2011 ԹՎԱԿԱՆԻՆ ԱՆՑԿԱՑՎԵԼԻՔ
ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՀՐԱՀԱՆԳՉԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԻ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Մարդահամարի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհուրդը **ո ր ո շ ու մ է.**

հաստատել «Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականին անցկացվելիք մարդահամարի հրահանգչական տեղամասի» ամփոփ տեղեկագիրը՝ համաձայն հավելվածի:

Ցուցումներ հրահանգչական տեղամասի ամփոփ տեղեկագրի լրացման վերաբերյալ

1. Հրահանգչական տեղամասի ամփոփ տեղեկագիրը (Ձև թիվ 7) լրացվում է հրահանգիչ-հսկիչի կողմից` իր տեղամասին ամրագրված հաշվարարներից մարդահամարի նյութերն ընդունելուց հետո:

Ամփոփ տեղեկագրի առաջին էջի (դիմային էջի) աջ անկյունում գրվում է մարդահամարի տեղամասի համարը, որի կազմում ներառված է հրահանգչական տեղամասը և վերջինիս հաշվային տեղամասերի քանակը, իսկ հասցեամասում գրվում է նաև հրահանգչական տեղամասի համարը:

Եթե հրահանգչական տեղամասի կազմի մեջ ներառված են և՛ քաղաքներ, և՛ գյուղական բնակավայրեր, ապա լրացվում են երկու ամփոփ տեղեկագրեր:

2. *Քաղաքների համար Ձև թիվ 7-ը լրացնելիս պետք է հաշվի առնել.*

- Եթե որևէ տուն (շինություն) բաժանված է երկու և ավելի հաշվային տեղամասերի, ապա Ձև թիվ 7-ում առանձին տողով գրառվում են յուրաքանչյուր հաշվային տեղամասի տվյալների հանրագումարները, այնուհետև հաշվարկվում է տան (շինության) հանրագումարն ամբողջությամբ:
- Եթե հրահանգչական տեղամասի կազմում ներառված են քաղաքային համայնքնին ենթակա գյուղական բնակավայրեր, ապա դրանց տվյալների հանրագումարները պետք է լրացվեն գյուղական վայրի ամփոփ տեղեկագրում:

3. *Գյուղական վայրերի համար Ձև թիվ 7-ը լրացնելիս պետք է հաշվի առնել.*

- Եթե որևէ բնակավայր բաժանված է երկու և ավելի հաշվային տեղամասերի, ապա Ձև թիվ 7-ում առանձին տողով գրառվում են յուրաքանչյուր հաշվային տեղամասի տվյալների հանրագումարները, այնուհետև հաշվարկվում բնակավայրի տվյալների հանրագումարն ամբողջությամբ:
- Եթե հրահանգչական տեղամասի կազմի մեջ ներառված են երկու և ավելի գյուղական համայնքներ, ապա սկզբում գրառվում են տեղեկություններ մեկ գյուղական համայնքի բոլոր հաշվային տեղամասերի վերաբերյալ, հաշվարկվում ամբողջությամբ գյուղական համայնքի տվյալների հանրագումարը, այնուհետև գրառվում են տեղեկություններ մյուս գյուղական համայնքի հաշվային տեղամասերի վերաբերյալ տվյալները և այդպես շարունակ:

4. 1-ին և 2-րդ բաժիններում հաշվային տեղամասերի տվյալները լրացվում են ըստ դրանց համարների հաջորդականության:

5. Ձև թիվ 7-ի 1-ին բաժնի «Հաշվառված է հաշվարարի կողմից» 1-13 սյունակները յուրաքանչյուր հաշվային տեղամասի համար լրացվում են Ձև թիվ 6-ի (հաշվային տեղամասի ամփոփ տեղեկագիր) համապատասխան հանրագումարային տվյալներից, իսկ 2-րդ բաժնի՝ «Հանրագումարը՝ հաշվի առնելով վերահսկիչ շրջագայությունը» տվյալները լրացվում են հաշվարարի ամփոփ տեղեկագրի «Ընդամենը հաշվի առնելով վերահսկիչ շրջագայությունը-ընդամենը ըստ հաշվային տեղամասի» տողի տվյալներից:

6. Ձև թիվ 7-ի «Վերահսկիչ շրջագայության արդյունքների ամփոփագիր» բաժինը հրահանգիչ-հսկիչը լրացնում է իր տեղամասի հաշվային տեղամասերի ամփոփ տեղեկագրերի (Ձև թիվ 6) «Վերահսկիչ շրջագայության արդյունքները» բաժնի համապատասխան տվյալներից:

7. Մարդահամարի հարցաթերթերում հաշվեգրված բնակչության ընդհանուր թվաքանակի տվյալները՝ 7-րդ սյունակի «Հանրագումարը հաշվի առնելով վերահսկիչ շրջագայությունը» տողում, պետք է հավասար լինի 7-րդ սյունակի «Ընդամենը հաշվառված է հաշվարարի կողմից» տողի հանրագումարի տվյալներին գումարած ամփոփ տեղեկագրի առաջին էջում լրացրած «Վերահսկիչ շրջագայության արդյունքները» ամփոփագրի 1-ին սյունակի «բաց թողնվածների» ընդհանուր թվաքանակի և հանած նույն տեղեկագրի 4-րդ սյունակի «Մխալմամբ գրանցվածների» ընդհանուր թվաքանակի վերաբերյալ տվյալները:

8. Կազմված հսկիչ թերթերի, վերահսկիչ փաստաթղթերի, ուղեկցող թերթերի և մարդահամարն անցնելու մասին բնակչությանը տրված տեղեկանքների քանակի մասին տվյալները լրացվում են Ձև թիվ 6-ի համապատասխան տվյալներն ամփոփելով:

9. Գրառելով բոլոր հաշվային տեղամասերի տվյալները և հաշվարկելով 3-րդ և 4-րդ սյունակներում նշված ցուցումներին համապտասխան հանրագումարները՝ հրահանգիչ-հսկիչը հաշվարկում է հանրագումարներն ամբողջությամբ ըստ հրահանգչական տեղամասի (ըստ 1-ին և 2-րդ բաժինների):

10. Համոզվելով, որ փաստաթուղթը ճիշտ է կազմված՝ հրահանգիչ-հսկիչը գրում է ամսաթիվը և ստորագրում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մարդահամար

Հավելված
Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2011 թվականի ապրիլի 15-ի թիվ 21-Ա որոշման

քաղաքային

Ձև թիվ 7-----*(որը պետք չէ, ջնջել)*

գյուղական

 	
Մարդահամարի տեղամասի համարը	Հրահանգչական տեղամասում ներառված հաշվային տեղամասերի քանակը
 	

Ա Մ Փ Ո Փ Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ՀՐԱՀԱՆԳՉԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԻ N-----

Մարզ-----Տարածաշրջան-----

Քաղաք-----Վարչական շրջան-----

Գյուղական համայնք-----

ՎԵՐԱՀՄԿԻՉ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Մարդահամարի ժամանակ հաշվարարի կողմից մարդահամարի հարցաթերթում բաց է թողնվել (մարդ)	Մարդահամարի ժամանակ հաշվարարի կողմից մարդահամարի հարցաթերթում սխալմամբ գրանցվել է (մարդ)				
	այդ թվում՝			այդ թվում՝	
Ընդամենը	ժամանակավոր ներկաներ	բացակայողներ	Ընդամենը	ժամանակավոր ներկաներ	բացակայողներ
<i>1.</i>	<i>2.</i>	<i>3.</i>	<i>4.</i>	<i>5.</i>	<i>6.</i>

Ընդամենը կազմվել են (քանակը)

Հսկիչ թերթ (Ձև թիվ 4)-----

Վերահսկիչ փաստաթուղթ (Ձև թիվ 6)-----

Ուղեկցող թերթ (Ձև թիվ 10)-----

Բնակչությանը տրվել է տեղեկանք մարդահամարն անցնելու մասին (Ձև թիվ 5)-----

